№ 224 Դեկտեմբերի 22 **1879** Դեկտեմբերի 22 № 224

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին տեսութիւն։ Նամակ Գանձակից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Թիւրքիա։ Իտալիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայոց Թատրոն։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

—

14 դեկտեմբերի

Գանձակում թէ կանայք շատ յետ են մնացած, թէ նրանք ամենևին հետաքրքրվել չը գիտեն կենսական, ազգային և ուսումնարանական հարցերով, դա անուրանալի ճշմարտութիւն է։ Ես դրա պատճառը գտնում եմ գլխաւորապէս նրանում, որ չունենք ժողովատեղեր, չունենք սովորութիւն մէկ մէկու մօտ ժողովվել ու խօսել, ինչպէս ասած է, մեր ցաւերը մէկ մէկու յայտնել. Էհ, սատանի ականջը խուլ, եթէ մէկ մէկ էլ եկեղեցումը իրար պատահում ենք, տեսակցութեան ժամանակն այնքան կարճ է լինում, որ հազիւ իրար առողջութիւնը հարցնելուց յետոյ կարողանում ենք իրար հագուստը լաւ տնտղելով իմանալ, կտորը ումից առնելը, նրա գինը և կարողը։ Այս անշարժութիւնը, որ համարեա հասել էր մեռելութեան, մի պատճառից շարժված կարծես թէ՝ կենդանութեան յոյս էր խոստանում. Անցեալ 1878 թւին մեր մէջ ձայն տարածվեց թէ քաղաքիս օրիորդաց դպրոցը օրից օր յետ է մնում. հասկացողները նրա պատճառը համարում էին դպրոցի նիւթական սուղ դրութիւնը։ Այդ ցաւալի լուրը շարժեց մեր բարի նախանձը, մի օր մէկ քանի հոգիք ժողոված լինելով մեզանից մէկի մօտ՝ այդ մասին երկար խօսեցինք, վերջն հասանք այն եզրակացութեան, որ մեր մէջ կամաւոր ստորագրութիւն բանանք, և բաժանորդական անդամ գըրվենք իւրաքանչիւրս տարեկան տասն ր.։ Ասածը իսկոյն իրագործվեց և մեր փոքրիկ ընկերութեան նախագահ ընտրեցինք տիկին Վ. Մելիքեանցին նրան տուինք անուանական ցուցակ անդամուհիների, բարոյական պարտք դնելով նրա վրա, որ նա շարունակէ ինչպէս ստորագրել տալ կանանց, նոյնպէս ստորագրվողներից նուիրագրամները ժողովէ. չը նայելով, որ տիկին Մ. առանց այն էլ ծանրաբեռնված էր իր տնական մեծամեծ հոգսերով, այնու ամենայնիւ ազգայինն բարձր դասելով քան անձնականը, մեծաւ ուրախութեամբ յանձն առաւ այդ պարտաւորութիւնը։

Ասացի, որ անցեալ տարի փոքր ինչ շարժման նշոյլ երևաց, բայց ցաւ մեծ, որ այդ նշոյլը դեռ չը վառված՝ հանգաւ։ Մենք մեծայոյս էինք, որ մի տարվայ մէջ գոնէ տիկին Մելիքեանցը մէկ քանի անգամ ժողով կը հրաւիրէ, անդամուհիներիս հաշիւ կը տայ, թէ ումից ինչ է ստացել և ում է յանձնել, ահա անցաւ մօտ տարի ու կէս, հակառակ մեր յոյսերին ոչ թէ չունեցանք ոչ մի ժողով, այլ և չը լսեցինք անգամ թէ՝ ժողովվեց արդեօք ստորագրվողներից նուիրագրամները թէ ոչ։

Թէև ցանկալի էր, որ մենք, կանայքս ունենայինք միջոց մէկ տեղ ժողովվելու, մեր հոգսերը իրար հաղորդելու, բայց ով կարժանացնէ մեզ այդ երջանկութեանը, քանի որ մեր մարդիկը իրանք էլ չունեն, նրանք էլ պատահած հարցերը ճարահատված միշտ վճռում են փողոցում մեծ մեծ չինարիների (սօսիների) տակ. քանի մեր դրութիւնը այսպէս է, ես լիայոյս եմ, որ տիկին Մելիքեանցը յարգելով խնդիրս և նեղութիւն յանձն առնելով՝ կամ մեզ անդամուհիներիս ժողով կը հրաւիրէ և կամ իր գործունէութեան մասին լրագրի միջոցով հաշիւ կը տայ։

Տիկին Թ. Մ.

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Երևան, 8 դեկտեմբերի

Ուղարկում եմ ձեզ վաթսուն և երկու րուբլի, որ ժողովել է պ. Ղազարեանցը Մեծ-Ղարաքիլիսայում իբրև մասնաւոր նպաստ իմ աշխատասիրած «Մայրենի լեզուի» երկրորդ տարին յօգուտ «Արարատեան» ընկերութեան տպագրելու համար։ Ես սպասում էի, որ ընկերութիւնն իմացնէ ինձ այդ գրքի տպագրութիւնն սկսելու, որպէս և առաջին տարվայ ստացման մասին, բայց մինչև այսօր չը ստանալով ցանկացած տեղեկութիւններս,

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

—Անջելօ։—Դուստր նկարչի։—Խաթաբալա։—Հարստահարված առաքինութիւն։—Դօն Կարլոս։—Դերասաններ՝ պ. Ադամեան և միրոնք։—Դերասանուհիք օր. օր. Աստղիկ, Սիրանուշ և միրոնք։

—

«Մշակի» անցեալ համարներում տպված թատրոնական յօդուածներով մենք ցոյց տուինք այն ըսխալ և վնասակար ուղղութիւնը, որին հետևում էին թատրոնի կառավարիչները, մենք բոլոր մեր ասածները փաստերով ապացուցեցինք։ Այն ժամանակից մինչև այժմ թատրոնական կօմիտէտը հետևում է նոյն ուղղութեանը այն զանազանութեամբ, որ առաջ ներկայացրած պիեսաները նոր էին մեր հասարակութեան համար, մինչդեռ այժմ փոքր բացառութեամբ, նոյն պիեսաները կրկնում են։

Բացառութիւններ են կազմում պ. Գ. Սունդուկեանի «Խաթաբալան», որ ներկայացվեցաւ նոյեմբերի 15-ին և թատրոնում գտնված հասարակութեան վրա շատ գեղեցիկ տպաւորութիւն թողեց և Շիլլերի «Դօն-Կարլօսը», որի ներկայացնելը մեր բեմի վրա այժմեան ոյժերով կատարեալ յանդգնութիւն է և այդպէս էլ համարվեցաւ հասարակութեան հասկացող մասի կողմից։ Իսկ ինչ մեզ կը վերաբերի, մենք շատ ուրախ էինք տեսնել «Դօն-Կարլօսը» մեր բեմի վրա, որովհետև դա միակ պիեսան էր, որ մեզ ցոյց տուեց պոլսեցի մեր թանգագին հիւրերին ֆրանսիական խոհանոցից դուրս։

Կրկնում ենք, որ թատրոնական մասնաժողովը իր գործունէութիւնը շարունակում է նոյն ուղղութեամբ, ինչպէս և առաջ, տալիս է ռօմանտիական պիեսաներ և այն էլ այնպիսիներ, որոնց անունը ոչ մի օրինաւոր բեմի աֆիշայի վրա այլ ևս չէք տեսնի։ Վերցնենք օրինակի համար «Դուստր նկարչի» 5 գործողութիւններով և 6 պատկերներով դրաման. ինչպիսի յիմարութիւն է, ինչպէս արբեցնող և թմրեցնող է այդ գրուածքը։ Ի՞նչեր չը կան այդ անշունչ գրուածքի մէջ. տաղանդաւոր և հարստահարված քանդակագործ, անազնիւ, չար և ոյժ ունեցող երգիծաբան գրող, գեղեցիկ դեկօրացիաներ և խօր, նշաւակներ, եկեղեցու գմբէթ, վիրաւորանք, սուր, թոյն, թշուառ մայր և ողորմելի հայր, որ մէկից խլել է նրա աղջկան և չը գիտէ թէ այդ աղջիկը իր արիւն և մարմինն է և այս հանգամանքը բեմի վրա ամենաանճոռնի և զզուելի կերպով յայտնվում է։ Երևակայեցէք, ընթերցող, ձեզ մի կին, որ չը գիտեմ մութը գիշեր ժամանակ, թէ ցերեկով, բայց դիմակաւոր մարդու ձեռքով բռնաբարվում է։ Կինը չը գիտէ չարագործի անունը, չէ տեսել նրա երեսը, միայն նրա ձեռքին մի փոքրիկ սուր է մնացել, որ կինը բռնաբարողի մէջքից հանել է։ Ահա այդ սրով նա գտնում է իր աղջկայ հօրը, յանցաւորին.... Մենք չենք կամենում այդ մասին երկարօրէն խօսել, այն էլ բաւական է, որ այդպիսի բան բեմից հասարակութեանը պատմվում է և այն էլ ամենաանճոռնի կերպով....

Մի վօդըվիլի մէջ տատմօրը բերում են հիւանդ կնոջ մօտ, բայց խեղճը հիւանդ կնոջ տեղ, մի հարբած մարդ է գտնում.... այսպիսի վօդըվիլը նկատվում է, այդպիսի անցքի ներկայացնելը անբարոյականութիւն է համարվում, մինչդեռ վերև պատմածը աննկատելի է անցնում տեղական այն լրագիրների կողմից, որոնք մինչև այժմ շարունակաբար հաշիւներ էին տալիս թատրոնական ներկայացումների մասին.... Ինչ և իցէ հասարակութիւնը «Դուստր նկարչի» ներկայացումից յետոյ նոյնքան անբաւական դուրս գնաց թատրոնից, որքան և «Դօն-Կարլոսի» ներկայացումից յետոյ, թէպէտ շարժառիթները զանազան էին. առաջինը մի հրէշաւոր գրուածք էր, իսկ երկրորդը հրէշաւոր կերպով ներկայացվեցաւ։

Այսպիսի մի ժամանակ, երբ զանազան պատճառներից և հանգամանքներից առանձին մի ըղբութիւն է կազմվել հասարակութեան մէջ, թատրոնական ռեցենզենտի գործը բաւական դժուար և բազմակողմանի է, որովհետև նրան գրեթէ անկարելի է որոշել, թէ ում մասին պէտք է գրէ. դերասանների և դերասանուհիների մասին, որոնք ներկայացնում են, կօմիտետի մասին, որ ներկայացնում է, թէ հասարակութեան մասին, որ թատրոնական դահլիճի զանազան մասերում բազմած նոյնպէս ներկայացնում է և հազար անգամ աւելի ճարպիկ կերպով, քան ոչ թէ մեր, այլ եւրոպական ամենալաւ դերասանները։

Հասարակութեան այդ ներկայացումները լինում են նոյն իսկ թատրոնական դահլիճում, թատրոնի անցքում, բուֆէտում և թատրոնի դրան մօտ, որտեղ կառքեր են կանգնում և զանազան վէնզելներ և բէնգալեան կրակներ են այրում։

Հայ թատրոնական մշտական խմբի ներկայացումներից բոլորին գրեթէ մենք ներկայ ենք գըտնվել և հաւատացնում ենք, որ ոչ մի ներկայացում (չենք խօսում տեղական գրուածքների մասին) մեզ այնքան չէ հետաքրքրել իր սրերով, թոյներով, սպանութիւններով և այլն, որքան հասարակութեան ներկայացումները, որ սկսվում են ամեն անգամ, երբ վարագոյրը իջնում է. մի տեղ կատաղած կերպով ծափահարում են, միւս տեղ բղաւելով բօղազները ճղում են, երրորդ տեղ դարդակ հարցի պատճառով թէ ով է թատրոնը այժմեան դրութեանը հասցրել սարսափելի վիճաբանութիւններ են լինում. Ամեն տեղ միայն կողմնապահութիւն և չողոքորթութիւն կարելի է նկատել։ Մի մարդ չես գտնի ամբողջ հասարակութենից, որին այս կամ այն հարցը առաջարկես և նա ուղղակի պատասխանէ, ասի այն, ինչ որ ինքն է մտածում, ինչ որ իր կարծիքն է։ Աւելորդ է ասել, որ մեր խօսքը չէ վերաբերում հասարակութեան ստորին դասին, որ չըշմում է, հարբում է թատրոնում և անտրակտի ժամանակ անգամ չէ կարողանում իր խելքը հաւաքել, որտեղ մնաց, որ նա դատողութիւններ տայ։

Մեր հասարակութիւնը չէ այցելում տեղական կեանքից վերցրած թատրոնական գրուածքներին. նա չէ սիրում բեմի վրա տեսնել իր այլանդակ պատկերը. այս միտքը յայտնվեցաւ օրերումս «Մըշակի» առաջնորդող յօդուածների մէջ, բայց մի և նոյն ժամանակ պէտք է յայտնել, որ հասարակական կեանքի այդ այլանդակ պատկերը թատրոնում իւրաքանչիւր ներկայացման ժամանակ կարելի է տեսնել։ Իւրաքանչիւր ներկայացման ժամանակ կարելի է նկատել անարդարութիւն, կողմնապահութիւն հասարակութեան կողմից. դերասանի խաղը չէ գնահատվում, այլ աչքի առաջ է առնվում նրա ով լինելը. պիեսայի արժանաւորութեան մասին հասկացող մարդն էլ ոչինչ չէ ասում, կօմիտետի բռնած ընթացքի դէմ ոչ ոք չէ բողոքում, այլ ի նկատի է առնվում այս կամ այն հանգամանքը և այս դէպքերում թ թ ու ա ծ և հ ը ն ա ց ա ծ ծ ա կ ազգասիրութիւնը առաջին տեղն է բռնում, «Ադամեան, Ադամեան...Ադամեանը այս արաւ, Ադամեանը այն արաւ, Ադամեանը հանճար է, գենի է», բղաւում են ամեն կողմից, բայց ցանկալի կը լինէր իմանալ արդեօք նոյն իսկ այդ պարոնները իրանք իրանց ասածին հաւատում են։ Տեսնենք այդ Ադամեանին։

Պ. Ադամեանը Թիւրքիացի հայ երիտասարդ է. այսինքն նա մեզ երևում է այն երկրի երիտասարդների ներկայացուցիչ, որ առիթ տուեց հայկական խնդրի բարձրանալուն։ Նա մեզ երևում է իբրև Թիւրքիացի այն երիտասարդներից մէկը, որոնք հիմնեցին «Արարատեան» և այլ ընկերութիւններ, որոնք աշխատում են հայի լուսաւորութեան համար, որոնք աշխատում են հայութեան համար։ Գուցէ նա այդ երիտասարդների թւին է պատկանում, գուցէ և չէ. այդ մեր գործը չէ։ Իբրև մի երիտասարդի մասին, իբրև մի հիւրի մասին, իբրև մի մասնաւոր մարդու մասին մենք ոչինչ չենք խօսի պ. Ադամեանի վրա. իբրև մասնաւոր մարդու մենք նրան գուցէ ուրիշներից աւելի էլ յարգում ենք։ Այս մասին մենք չէինք էլ խօսի, եթէ ի նկատի չունենայինք որ պ. Ադամեանի աջողութիւն ունենալու պատճառը հասարակութեան մի յայտնի մասի մէջ, այդ իսկ հանգամանքներն են...

Պ. Ադամեանին առաջին անգամ մենք տեսանք «Սէր առանց համարման» պիեսայի մէջ և առաջին անգամից նկատեցինք, որ պարոնը ոչ թէ հանճար է, ոչ թէ գենի է, այլ միջակ ընդունակութիւնների տէր մի դերասան։ Մենք այն ժամանակ չը յայտնեցինք մեր այդ կարծիքը, վախենալով սխալվել և սպասեցինք միւս ներկայացումներին, որոնք տարաբաղդաբար բոլորն էլ միատեսակ. նոյն շկօլային էին պատկանում, մինչև որ ներկայացրին Շիլլերի Դօն-Կարլօսը։ Այս կամ այն շկօլան էլ կարող է ունենալ իր միջակ ընդունակ, տաղանդաւոր, հանճարաւոր և գենի գործողներին, իւրաքանչիւր ասպարիզում, լինի նա վիպական, դրամատիկական և այլն. ուրեմն նոյն իսկ այս կողմից նայենք գործի վրա։ Վերցնենք առաջին անգամ ներկայացրած պիեսան «Սէր առանց համարման»։ Այդ տեղ կայ մի տեսարան, երբ տղամարդը իր կնոջից ազատվելու համար վճռում է թունաւորել իր կնոջը և թունաւորելու գործողութիւնը բեմի վրա է կատարվում։ Այդ տղամարդու դերը, այդ ամուսնի դերը, Էրկոլէ Մօնթէսիլա կոմսի դերը կատարում էր պ. Ադամեանը։ Այդպիսի հանգամանքում, երբ տղամարդ ամուսինը թունաւորում է իր կնոջը նրա մէջ զանազան զգացմունքներ կռւում են միմեանց հետ (էլ չենք խօսում, որ այն շարժառիթները, որոնք կոմսին դրդում են թունաւորել իր կնոջը բոլորովին կրիտիկայի չեն դիմանում). մի կողմից կոմսը կամենում է ազատվել իր կնոջից և այդ ազատութիւնը նրա կեանքի նպատակն է, միւս կողմից նա երկիւղ է կրում, որ իր յանցանքը կարող է յայտնվել և ինքը կը պատժվի։ Արգելված պտուղը կոմսի համար մեծ արժէք ունէ, բայց մի և նոյն ժամանակ խիղճն էլ նրան հանգիստ չէ թողնում։ Կոմսի ջղերը լարված են, ամենափոքր աղմուկը նրա վրա սարսափելի տպաւորութիւն է գործում, մի կողմից խառնված և չփոթված մտքերը, միւս կողմից դառը իրականութիւնը չարչարում են կոմսին։ Պ. Ադամեանը «Սէր առանց համարման» պիեսայի մէջ մարդու կեանքի այսպիսի րօպէ ներկայացրեց։ Մենք կուզենայինք այս դէպքում գոնեա այն ասել, որ պ. Ադամեանը վ ա տ չ է ր, որովհետև միւս պիեսաներում նա աւելի աջողութիւն գտաւ և որովհետև այդ մեր առաջին կարծիքն է պարոնի խաղի մասին, բայց տարաբաղդաբար պէտք է խոստովանենք, որ այդ տեսարանի մէջ պարոնը անբնական էր։ Եթէ մենք պիեսան չէինք տեսել, այլ թատրոն էինք եկել նոյն իսկ այդ տեսարանի ներկայացման ժամանակ, կը մտածէինք որ կոմսը կամ իրան թունաւորել է, կամ հարբած է ստացել։ Նրա անբնական շարժուածքները, մատներէ ծռե-

